

փափաքներէն մէկն էր անգամ մըն ալ Երուսաղէմ երթալ¹, տեսնելու համար իր խելացի ձեռնարկութեան փառաւոր արդիւնքները եւ Շղթայակրին անընկճելի վաստակներուն փառքը:

Երկար եւ յաջող յոգնութիւններէ ետքը սկսող այն հանդարտութիւնը շատ շտեւեց: Կոլոտ Պոլսոյ այս բարեյիշատակ, երանելի եւ Բաղնիշէր պատրիարքը, իր պատրիարքութեան քսանվեց տարւան հարթ եւ անհանգոյց ճամբուն ծայրը եւ իր հոգեւուն հետեւողներուն գիրկը հանգչեցաւ 1741, Փետրվար 13 ուրբաթ օրը²: Իր մահուան պարագաները թէ եւ ծանօթ չեն, բայց կ'երեւայ թէ տաժանելի հիւանդութիւններով անկողին գամուած եւ տառապած չէ: Կոլոտի շիրիմը պատրաստուեցաւ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ գաւիթը, «ի հարաւոյ կողմանէ Աւագ դրանն»:

Նալեան, որ Կոլոտի մահուան երկրորդ օրն իսկ հագաւ պատրիարքական խիւն, իրնախագահութեամբ սարքեց մեծավայելուչ յուզարկաւորութիւն մը եւ իր իսկ ձեռքով՝ ամփոփեց իր Մեծ-

1 Չամչեան գիտել կու տայ թէ Կոլոտ չը պատրաստուէր Հռովմ ալ երթալ: Կոլոտ այնչափ կը սիրէր Երուսաղէմը, որ իր Եպիսկոպոսական հարուստ զգեստը կտակեց Ս. Յակոբայ, իր վախճանումէն յառաջ:

Շղթայակիր երբ լսեց Կոլոտի այս կտակը, անմիջապէս գրեց Նալեան Պատրիարքին թէ Ս. Յակոբայ կողմէն իրեն կը նուիրէ այն զգեստը:

Նալեան շնորհակալ եղաւ Շղթայակրի համակրութեան համար. բայց եւ այնպէս կատարեց իր հոգեւոր Հօր կտակը եւ Սեղբոս Ամիրայի ձեռքով յանձնուեցաւ զգեստը Շղթայակիր պատրիարքին՝ 1741 Յուլիս 18ին, Կոլոտի մահուանէն վեց ամիս ետքը (Տես Ժ. Ֆիլիքր. Պրմ. Ս. Երուսաղէմ. Բ. հատոր էջ 66):

2 Տապանագրին մէջ «ի ներ քան ի հինգ ամաց պատրիարքութեան» արձանագրուած է: Իրաւ որ ամենախիստ ճշգուծեամբ ոչ ամբողջ 26 տարի է, ոչ ալ՝ 25: Բայց 1715 Սեպտ. — 1741 Փետրվար՝ 26ը կ'արդարացնէ: